ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1748-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N ՆԹ-7271-26 ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 6-ի ՆՆԹ-7271-26 նախագծման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1749-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2713-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝2025 թվականի դեկտեմբերի 22-ի «Սևան համայնքի ղեկավարի՝ 25.11.2025թ. N 2512-Ա որոշման վերնագրում փոփոխություն կատարելու մասին» N 2713-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1750-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N 1235-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի մայիսի 21-ի «Ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» N 1235-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) որոշման 2-րդ կետում՝ «26. 49քմ մակերեսով նկուղի /ներքին մակերեսը՝ 20. 36քմ/» բառերից հետո կարդալ «և 0. 63քմ մակերեսով ծածկի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1751-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Արման Սահակյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Արման Սահակյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Օղակաձև փողոց թիվ 39 հասցեում գտնվող հողատարածքում մանսարդային հարկով բնակելի տան և պարսպի կառուցման համար:
2. Արման Սահակյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Արման Սահակյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

1897

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1752-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.24632 հա մակերեսով /գ. Գեղամավան/ գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

1898

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1753-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Տարոն Հարությունյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 20 / 41 հասցեում գտնվող հողատարածքում երկհարկանի, նկուղային հարկով բնակելի տան կառուցման համար Տարոն Հարությունյանին տրամադրված Սևան համայնքի ղեկավարի՝ 12. 07. 2024թ. N 84 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 12 ամիս ժամկետով:
2. Տարոն Հարությունյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

1899

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1754-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 18.11.2025թ. N125-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Աիդա Գասպարյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Աիդա Գասպարյանի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Ամառանոցային փողոց, 2-րդ նրբանցք թիվ 16 հասցեում գտնվող հողատարածքում կառուցվածպարսպի շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

1900

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1755-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղաքացի Լարիսա Խորենի Շահբազյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Գագարին, Երիտասարդական փողոց թիվ 1 / 2 հասցեում կառուցված 37. 05քմ մակերեսով կիսակառույց ավտոտնակը, զբաղեցրած 44. 0քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Գագարին, Երիտասարդական փողոց թիվ 1 / 2 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 19. 05. 2026թ. թիվ 1202-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 02. 07. 2026թ. պետական գրանցում ստացած 37. 05քմ մակերեսով կիսակառույց ավտոտնակը՝ 1քմ՝ 1209 դրամ, զբաղեցրած 44. 0քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 1221 դրամ, ուղղակի գոռծարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. օտարել Լարիսա Շահբազյանին :
2. Քաղաքացի Լարիսա Խորենի Շահբազյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

1901

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1756-Ա

ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14[3] հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 130.8քմ մակերեսով բնակարանը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց, 42 շենք թիվ 115 բնակարան հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

1902

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1757-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով և հիմք ընդունելով քաղ. Սևակ Ստեփանյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գյուղ Դդմաշեն, 1-ին փողոց թիվ 4 հասցեում գտնվող 0.34669 հա մակերեսով հողատարածքի գործառնական նշանակությունը փոխելու մասին, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Դդմաշեն բնակավայրի գլխավոր հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գյուղ Դդմաշեն, 1-ին փողոց թիվ 4 հողամաս հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Սևակ Ստեփանյանին պատկանող, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության 0.34669հա մակերեսով հողատարածքի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման նշանակության :
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

1903

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1758-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 18-րդ կետերով և 11-րդ կետի գ) ենթակետով, հիմք ընդունելով քաղ. Նվեր Գարուշի Համբարձումյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 23-րդ փողոց թիվ 2 բնակելի տուն հասցեում գտնվող 0.30600հա մակերեսով հողատարածքում ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, հաշվի առնելով, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Սեփականության իրավունքով Նվեր Գարուշի Համբարձումյանին պատկանող՝ Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 23-րդ փողոց թիվ 2 բնակելի տուն հասցեում գտնվող 0.30600հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից 2015թ. ինքնակամ կառուցված 73.45քմ մակերեսով նկուղի /ներքին մակերեսը՝ 54.75քմ/, 174.18քմ մակերեսով տնտեսական շինության /ներքին մակերեսը՝ 138.7քմ/ և 5.02քմ մակերեսով պարսպի կառուցման աշխատանքները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026VQVVTM/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 616.8 դրամ:
2. Նվեր Գարուշի Համբարձումյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 23-րդ փողոց թիվ 2 բնակելի տուն հասցեում գտնվող 0.30600հա մակերեսով հողատարածքում 59.4քմ մակերեսով շինության քանդման աշխատանքները ճանաչել օրինական:
3. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14

1904

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1759-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն և ՀՀ կառավարության՝ 18. 05 2006թ. թիվ 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով քաղ. Իգիթ Մարգարյանի դիմումը՝ Ծովագյուղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14. 04. 1992թ. N3 նիստի որոշմամբ Ալիկ, Վարդանուշ, Էլմիրա, Էմմա, Լիաննա և Իգիթ Մարգարյաններին հատկացված 1. 775հա մակերեսով հողատարածքը, որից՝ անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 0. 15հա մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ծովագյուղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14. 04. 1992թ. N3 նիստի որոշմամբ՝ Ալիկ Ռազմիկի Մարգարյանին /ծնված՝ 05. 12. 1954թ. /, Վարդանուշ Արարատի Մարգարյանին /ծնված՝ 27. 02. 1958թ. /, Էլմիրա Ալիկի Մարգարյանին /ծնված՝ 24. 08. 1976թ. /, Էմմա Ալիկի Մարգարյանին /ծնված ՝ 03. 11. 1977թ. /, Լիաննա Ալիկի Մարգարյանին /ծնված՝ 24. 06. 1980թ. / և Իգիթ Ալիկի Մարգարյանին /ծնված՝ 23. 11. 1981թ. / հատկացված 1. 775հա մակերեսով հողատարածքից ավել օգտագործվող 0. 08326հա մակերեսով բնակելի նշանակության հողատարածքը, որը գտնվում է 0. 15հա մակերեսով անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված հողատարածքին կից, ճանաչել Ալիկ, Վարդանուշ, Էլմիրա, Էմմա, Լիաննա և Իգիթ Մարգարյանների սեփականության իրավունքը:
2. Ալիկ, Վարդանուշ, Էլմիրա, Էմմա, Լիաննա և Իգիթ Մարգարյաններին պատկանող, Սևան համայնք, գ. Ծովագյուղ հասցեում գտնվող 0. 23326հա մակերեսով հողատարածքում 1990թ. կառուցված երկհարկանի բնակելի տունը՝

1-ին հարկ՝ 161. 09քմ մակերես /ներքին մակերեսը՝ 125. 2քմ/, 2-րդ հարկ՝ 142. 61քմ մակերես /ներքին մակերեսը՝ 116. 25քմ/, ճանաչել օրինական՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին փողոց թիվ 13 բնակելի տուն հասցե:

3. Ալիկ, Վարդանուշ, Էլմիրա, Էմմա, Լիաննա և Իգիթ Մարգարյաններին պատկանող, Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին փողոց թիվ 13 հասցեում գտնվող 0. 23326հա մակերեսով հողատարածքում 2015թ. կառուցված 74. 92քմ մակերեսով անասնագոմը /ներքին մակերեսը՝ 68. 56քմ/ ճանաչել օրինական՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 524. 4 դրամ:
4. Ալիկ, Վարդանուշ, Էլմիրա, Էմմա, Լիաննա և Իգիթ Մարգարյաններին պատկանող, Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին փողոց թիվ 13 հասցեում գտնվող 0. 23326հա մակերեսով հողատարածքում 2023թ. կառուցված 74. 61քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 67. 73քմ/ ճանաչել ինքնակամ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1760-Ա

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ կառավարության՝ 2016թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի, Խաղաղության փողոց, 12 շենք, բնակարան 26 հասցեի բնակիչ Էմմա Կամոյի Առստամյանի (ծնված՝ 12. 12. 1988թ) դիմումը՝ շարժական գույքի՝ անչափահաս երեխաներին պատկանող բաժնեմասերի օտարման թույլտվություն տրամադրելու մասին, հաշվի առնելով Սևանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Թույլատրել Էմմա Կամոյի Առստամյանին՝ օտարելու ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով շարժական գույքի՝ VAZ 210740 մակնիշի, 01MA112 համարանիշի, 2010 թվականի արտադրության ավտոմեքենայի՝ անչափահաս երեխաներին՝ Ալինա Միքայելի Առստամյանին (ծնված՝ 14. 11. 2012թ.) և Լիոնիդ Միքայելի Առստամյանին (ծնված՝ 11. 03. 2015թ.) պատկանող 1/8–ական բաժնեմասերը:
2. Պարտավորեցնել Էմմա Կամոյի Առստամյանին՝ անչափահաս երեխաների՝ Ալինա Միքայելի Առստամյանի և Լիոնիդ Միքայելի Առստամյանի՝ 1/8 բաժնեմասեր հանդիսացող շարժական գույքի օտարումից ստացված եկամուտները տնօրինել հօգուտ երեխաների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2026 թվականի թիվ 1761-Ա

«ՄԵՐ-ՍԻՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՍԻՐԵԿԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Սիրեկան Բաղդասարյանին վարձակալությամբ պատկանող հողատարածքում ինքնակամ տեղադրված շինութունների փաստը՝ պարզեցի. համաձայն ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի՝ 28.04.2026թվականի N ՔՏՄ/18.9/11829-26 գրության և ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության կողմից կազմված N 04022667 արձանագրության՝ «Մեր-Սիր» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքում կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ՝ ապօրինի տեղադրվել են տաղավարներ: «Մեր-Սիր» ՍՊԸ-ի տնօրենը 17.04.2026թվականին պարզաբանում է տվել այն մասին, որ էկոպարեկների այցից հետո դադարեցրել է շինարարական աշխատանքները, իսկ շինարարական նյութերը տեղափոխվել են այլ վայր: Հիմնավորված է այն փաստը, որ Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղեկանքի համաձայն՝ ՍՊԸ-ն օրենքով սահմանված կարգով շինարարության թույլտվություն չի ստացել: Վարույթի նյութերը մանրամասն ուսումնասիրելու նպատակով վարույթը սահմանված կարգով կասեցվել է: Հիմնավորված է՝ «Մեր-Սիր» ՍՊԸ-ի տնօրեն Սիրեկան Բաղդասարյանը, խախտելով ՀՀ կառավարության 2001թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածների պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության, ինքնակամ տեղադրել է տաղավարներ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներով՝ ենթակա չեն օրինականացման և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ Քաղաքաշինության մասին օրենքի 26-րդ հոդվածի ե) կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել «Մեր-

Սիր» ՍՊԸ-ին կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները (տաղավարները):

2. Առաջարկել ՀՀ ՆԳՆ ՀՈԳՎ Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրյա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 հուլիսի 2026 թվականի թիվ 1762-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, ուսումնասիրելով ՀՀ Ներքին գործերի նախարարության Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Սևանի բաժնից ստացված նյութերը, քննելով քաղաքացի Արթուր Հակոբի Վարդանյանի վերաբերյալ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի բոլոր նյութերը, կատարելով բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, նախաձեռնելով վարչական վարույթ և հրավիրելով վարչական լսում՝ պարզվել է, որ Արթուր Հակոբի Վարդանյանը 2026 թվականի հուլիսի 3-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, Սևան քաղաքի Նաիրյան փողոցում՝ մայթի վրա, զբաղվել է սնկի առևտրով՝ առանց տվյալ վայրում սահմանված կարգով առևտուր իրականացնելու թույլտվություն ունենալու: Քաղաքացի Արթուր Վարդանյանը տվել է պարզաբանում՝ նշելով, որ անհատ ձեռնարկատեր է, սնկի վաճառք իրականացրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցից, այլևս նման արարք չի կատարելու, ունի երեք անչափահաս երեխա, զբաղում է իր արարքի համար, առաջին անգամ է կատարում իրավախախտում, գիտակցում է արարքի հնարավոր շարունակման դեպքում վրա հասնող անբարենպաստ հետևանքները, համադրելով առկա հանգամանքներն ու վարչական գործի նյութերը՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Արթուր Հակոբի Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ չսահմանված վայրում սնկի առևտրով զբաղվելու համար:
2. Քաղաքացի Արթուր Վարդանյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացում:
3. Արթուր Հակոբի Վարդանյանին զգուշացնել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 22-րդ, 23-րդ, 162 հոդվածներից բխող հնարավոր անբարենպաստ հետևանքների վերաբերյալ:
4. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով կարող է բողոքարկվել համայնքի ղեկավարին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 15
ք.Սևան

1910

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 1763-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 1689-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 3-ի «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1689-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 1-ին կետում՝ «0.12000հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «0.01879հա մակերեսով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 1764-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Վահան Օհանյանի լիազոր անձ Գառնիկ Ստեփանյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 939001/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 57 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 1765-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արայիկ Պողոսյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 19052026-05-0042/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Զովաբեր, 8-րդ փողոց թիվ 1 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 1766-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «ԴԻՋԻԴԱԹԱ» ՓԲԸ-ի տնօրեն Վահե Կիրակոսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով ՓԲԸ-ին պատկանող, Սևան համայնք, գ. Գագարին, Գործարանային փողոց փողոց թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայական՝ 15122023-05-0080/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Գագարին, Գործարանային փողոց փողոց թիվ 2 հասցեում գտնվող 0.8733 հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքերի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր գույքի՝ 0.19465 հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Գագարին, Գործարանային փողոց փողոց թիվ 2 / 6 տնտեսական շինություն հասցե;
2) երկրորդ միավոր գույքի՝ 0.67865 հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Գագարին, Գործարանային փողոց փողոց թիվ 2 / 5 հողամաս հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 1767-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Հունան Պողոսյանի լիազոր անձ Արայիկ Խաչատրյանի դիմումը՝ սեփականության իրավունքով Հունան Պողոսյանին պատկանող, Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց փողոց թիվ 28 հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայական՝ 17062026-05-0040/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց փողոց թիվ 28 հասցեում գտնվող 0.3655 հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր գույքի՝ 0.3367 հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց փողոց թիվ 28 բնակելի տուն հասցե;
2) երկրորդ միավոր գույքի՝ 0.02881 հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց փողոց թիվ 28 / 1 կիսակառույց հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 1768-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան թիվ 1 հողամաս հասցեում գտնվող 1.25390 հա մակերեսով անշարժ գույքը /կադաստրային ծածկագիր՝ 05-004-0300-0002/, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 4 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր գույքի՝ 0.0600հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Աղթամար թաղամաս, 2 հողամաս հասցե;
2) երկրորդ միավոր գույքի՝ 0.0600 հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Աղթամար թաղամաս, 3 հողամաս հասցե;
3) երրորդ միավոր գույքի՝ 0.01044 հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Աղթամար թաղամաս, 1 հողամաս հասցե;
4) չորրորդ միավոր գույքի՝ 1.12346 հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Աղթամար թաղամաս, 4 հողամաս հասցե:

2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 16
ք.Սևան

1916

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 1769-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Կարեն Սարիբեկյանի լիազոր անձ Մանվել Մուրադյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց 166 / 41, 42 և Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց 166 / 51 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /վկայականներ՝ N14052020-05-0015, N 09072026-05-0004/միավորելու, միավորված անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց 166 / 41, 42 և Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց 166 / 51 հասցեներում գտնվող գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 166 / 51 առևտրի սրահ հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 1770-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Մուշեղ Սաղաթելյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող անշարժ գույքի /կադաստրային ծածկագիր՝ 05-024-0012-0007/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Գեղամավան, 3-րդ փողոց, 1-ին նրբանցք թիվ 4 / 1 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 1771-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Գարիկ Հովհաննիսյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 25 / 54 հասցեում 51.27 քմ մակերեսով ավտոտնակը և 51.27 քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով Գարիկ Հովհաննիսյանին վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 25 / 54 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 06. 2026թ. թիվ 1412-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 03. 07. 2026թ. պետական գրանցում ստացած 51.27քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ, 51.27 քմ ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Գարիկ Հովհաննիսյանին:
2. Քաղ. Գարիկ Հովհաննիսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 16
ք.Սևան

1919

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 1772-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 18.11.2025թ. N125-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Սևակ Գրիգորյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Սևակ Գրիգորյանի կողմից՝ Սևան համայնք, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, թիվ 23 հասցեում գտնվող հողատարածքում բնակելի տան վերակառուցման շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 1773-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Սեյրան Նավասարդյանի դիմումը՝ ք. Սևան, Ս. Սևանեցու փողոցի ավտոտնակների շարքում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 23.59 քմ մակերեսով ավտոտնակը և 23. 59 քմ մակերեսով նկուղն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեյրան Նավասարդյանի կողմից՝ ք. Սևան, Ս. Սևանեցու փողոցի ավտոտնակների շարքում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 23. 59 քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 20. 38 քմ/, 23. 59 քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 16. 89/ և զբաղեցրած 23. 59քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Սեյրան Նավասարդյանի կողմից ինքնակամ կառուցված 23.59 քմ մակերեսով ավտոտնակը և 23.59 քմ մակերեսով նկուղը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023ZVBF4D/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 6 / 9 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2026 թվականի հուլիսի 16
ք.Սևան